№ 106.—ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՂԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետոյ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Меду Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԻՒՐԱԿԷ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1882

Խմբագրութեանս ուղղած թէ՛ յօդուածները եւ թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին զրոցի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ. Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։ Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը, «Կովկաս» հիւրանոցի տակ պ. Ց. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում եւ պ. Շահվերդեանի պավիլիօնում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ախալցխայի կաթոլիկ-հայերի վէճը։
Ազգային. — Թղթակցութիւններ Բագուից, Ախալցխայից և Ղազախից։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Մանր լուրեր։
Յայտարարութիւններ։
Բանասիրական.—Հայ բողոքականի ընտանիքը։

ԹԻՖԼԻՍ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1882 Թ.

ԱԽԱԼՑԽԱՅԻ ԿԱԹՈԼԻԿ-ՀԱՅԵՐԻ ՎԷՃԸ։

Արդէն յայտնի է «Մեղուի» ընթերցողներին Ախալցխայի հայախօս և վիրախօս հայ-կաթոլիկների վէճը և Սարատովի կաթոլիկ եպիսկոպոսի կամ, ինչպէս կարծումենք, աւելի ուղիղը, պատօրի այդ մասին վիրախօս-կաթոլիկների օգտին տուած վճիռը։ Կարճ կարենք. վիրախօս կաթոլիկները կամենում են եկեղեցին իրենց ձեռքը ձգել և հայ-կաթոլիկ եկեղեցուց հայոց լեզուն արտաքսելով՝ մոցնել օտար, վրացերէն լեզուով ժամասացութիւնը։ Այդ նպատակին հասնելու համար առաջին և յարմար միջոցը դտնում են նրանք վիրախօսներից երեսփոխան ընտրելումը։ Այդ ընտրութեան դէմ են հայախօս-կաթոլիկները, որոնք ջերմ պաշտպան հանդիսանալով մայրենի լեզուին, մայրենի բարբառին և աւանդութեամբ սրբազործուած իրաւունքներին ամենևին չեն ընդունում վիրախօս-կաթոլիկ երեսփոխանի ընտրութիւնը և այդ տեսակ ապօրինի նորութիւնները։ Ու դեռ այդ նենգութիւններից արթնանալով՝ բոլորովին հեռացնել են ուզում իրենց եկեղեցուց և ժամասացութիւնից օտար լեզուն, որը իրենց թուլութեամբը մի անգամ ներմուծվել է ժամասացութեան մէջ։ Ինչպէս այդ վէճի մասին խօսելիս և այս անգամ էլ ասացինք, որ կաթոլիկ հոգևոր իշխանութիւնը և դրա գլուխ Սարատովի պատօրը այդ վէճումը վիրախօսների կողմն են բռնել և այդ պատօրը հրամայել է, որ վիրախօսները իրենց համար մի երեսփոխան ընտրեն։

Մենք մեր մի երկու առաջնորդողներում ցոյց տուինք հայախօս կաթոլիկ-հայերի իրաւունքները և նրանց բռնելիք ճանապարհը այդ վէճումը։

Մենք յայտնեցինք, որ ոչ մէկ օրէնքով չի կարելի հայ-կաթոլիկներին ստիպել, որ իրենց եկեղեցումը ժամասացութիւնը կամ աղօթքը կամ Աւետարանի կարդալը կատարուի օտար լեզուով և թէ այդ անելու հրամայել չի կարող Սարատովի պատօրը, քանի որ այդ վարմունքը թէ՛ իրաւունքի, թէ՛ աւանդութիւնների, թէ՛ խղճի և թէ՛ պարզ և հասարակ դատողութեան դէմէ, և աւելացնենք և այն, որ օրէնքի հիմանց վերայ Սարատովի պատօրը ժամանակաւոր հովիւ է հայ-կաթոլիկների վերայ մինչև «հայ-կաթոլիկ» եպիսկոպոսի ընտրելը։ Այդ վէճը, որը գնալով երկու կողմը աւելի յուզումէր, վերջացնելու. կամ աւելի պարզելու համար, մենք հայախօս կաթոլիկ-հայերին խորհուրդ տուինք հարցնելու հոգևոր իշխանութիւնից, թէ արդեօք վիրախօս-կաթոլիկները ի՞նչ ազգութեան են պատկանում, որովհետև օրէնքի առաջ «վրացի-կաթոլիկ» չը կայ։

Այժմ մեր առջևն է դրած կաթոլիկ-հոգևոր վարչութեան այդ հարցմունքին տուած պատասխանի պատճէնը 599 համարի տակ։ Այդ պատասխանից կարելի է տեսնել, թէ ի՞նչ մտայլ և եղուիտական ոգի է տիրում այդ հոգևոր վարչութեան մէջ, որի մէկ ծայրը Վատիկանի մութ սրահներում անհետանումէ։ Մենք պատասխանի մանրամասնութիւնները մէջ չենք բերում, որտեղ «հայ-կաթոլիկ» հոգևոր վարչութիւնը «հայ-կաթոլիկ»-ներին երեք ազգութիւնից է կազմած համարում,—գաղթականներ հայոց ազգութիւնից և վրացի և թիւրք (օհօ՛) ազգութիւններից։ Այս անհեթեթութեան վերայ չենք ուզում խօսել, բաւական է որ ընթերցողը գիտենայ թէ ինչը կաթոլիկ հոգևոր իշխանութիւնը այդ դէպքում իրեն պաշտօնապէս «հայ-կաթոլիկ» հոգևոր իշխանութիւն է անուանում, բաւական է որ ընթերցողը գիտենայ թէ Վատիկանը ոչ մէկ ազգութիւն չէ ճանաչում և ազգային ինքնուրոյնութիւնները ջնջելէ աշխատում։

Մենք մէջ կը բերենք այստեղ յիշեալ թղթից միմիայն այն կտորը, որը ուղղակի պատասխանումէ հայախօս-կաթոլիկների դրած հարցմունքին։ Մենք այդ կ'անենք աւելի ուրախութեամբ, որովհետև այս անդամ հայ-լեզուի դաւաճանը ինքն իւր ձեռքովը իւր չար գործը դատապարտումէ և օգնումէ խնդրի պարզուելուն։

Պատասխանը գրուած է պաշտօնապէս «հայ-կաթոլիկ հոգևոր վարչութեան» կողմից և ասում է թէ՝ ս. Աստուածածնայ եկեղեցու ծխականները—«որոնք խօսում են վրացերէն լեզուն, ինչ ազգութեան էլ որ պատկանում լինէին, ինչպէս իրենք են, նոյնպէս և իրենց նախորդները էին մաքուր հայ-կաթոլիկներ։ Բաւական է գիտենալ, որ վերափոխման (ս. Աստուածածնի) եկեղեցին յաճախողները, ինչ լեզուով էլ որ խօսում լինէին, հայերէն թէ վրացերէն, բոլորն էլ հայ-կաթոլիկներ են»։

Խնդիրը կարծումենք, որ պարզուեցաւ, թէպտեւ կաթոլիկ-հոգևոր իշխանութիւնը «ինչ ազգութեան էլ որ պատկանում լինէին» խօսքերը գործածելով ճշմարտութիւնը խեղաթիւրել է կամենում։

Վրացի-կաթոլիկ չը կայ և ինքը հոգևոր իշխանութիւնը խոստովանում է, որ վիրախօս-կաթոլիկները Ախալցխայում թէ՛ իրենք և թէ՛ իրենց նախորդները—եղել են և են մաքուր «հայ-կաթոլիկներ»։ Ուրեմն վիրախօս կաթոլիկները ազգով հայ են և օրէնքի առաջ էլ այնպէս են ճանաչուած։ Ճշմարիտ է, կաթոլիկ հոգևոր իշխանութիւնը կարող է ասել թէ կաթոլիկ եկեղեցուն պատկանում են և լեհացիները, իտալացիները, գերմանացիները, և այլն և այլն, որոնք բընակվում են Կովկասում, բայց դրանք կոչվում են հռոմէական-կաթոլիկներ և ոչ թէ «հայ-կաթոլիկ»-ներ, և եթէ հայ-կաթոլիկները իրրև մի առանձին կրօնական համայնք ջոկվում էը լինէին օրէնքի առաջ, էլ հարկաւորութիւն չը կար ազգութիւնների մէջ գրելէ ամենաթոյլի անունով կնքել այդ եկեղեցին, այդ համայնքը անուանելով «հայ-կաթոլիկների համայնք»։ Երբ պետութիւնը օրէնքով ընդունում է «հայ-կաթոլիկ» բառը, նա դրանով ջոկում է հայ-կաթոլիկներին միւս հռոմէական կաթոլիկներից։

Ուրեմն աւելի քանթէ ծաղրելի է «հայ-կաթոլիկ» հոգևոր վարչութեան անունով խօսել և դրա մէջ վրացիներ և թուրքեր մոցնել, որոնք ոչ իրական կեանքում և ոչ օրէնքի առաջ գոյութիւն ունին։

Այս այսպէս լինելով՝ Ախալցխայի «հայ-կաթոլիկ համայնք»-ը թէ՛ հայախօս և թէ՛ վիրախօս հայերը այժմ պարտաւոր են միասին հաւաքվելու և միասին իրենց միջից սովորութեան համեմատ ընտրելու մի կամ երկու երեսփոխան։ Վերափոխման եկեղեցու տնտեսական վարչութիւնը վարելու համար։ Իսկ ինչ վերաբերում է վրաց լեզուի խնդրին և այդ լեզուով Աւետարանի կարդալուն և մի քանի կրօնական ծիսակատարութեանը՝ ինքն ըստինքեան հասկանալի է, որ այսուհետև չի կարող այդ տեղի ունենալ ս. Աստուածածնայ եկեղեցում։

Իսկ թէ կաթոլիկ հոգևոր վարչութիւնը դարձեալ պահանջելիս լինի, որ վիրախօսները իրենց համար առանձին երեսփոխ ընտրեն, այդ երբէք և ոչ մէկ դէպքում չի կարելի ընդունել։ Հոգևոր իշխանութիւնը ինքն իրեն և օրէնքի դէմ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ*)։

—

Դ.

Մի կիւրակէ առաւօտ քարոզիչ Աւետիքը եկաւ ոսկերչի տունը և յայտնեց նրան, որ իրանց գլխաւոր պատօրը Տֆիխից եկել է, ուստի ինքն էլ բոլոր միւս «եղբայրների» հետ պիտի պատրաստուի նրա տեսութեան գնալու։ Ոսկերիչ Գրիգորը նախ երկիւղ յայտնեց իւր ազիտութեամբ մեծապատիւ պատօրի առաջ երեսալու. բայց երբ Աւետիքը հարեանցի կերպով ծանօթացրաւ նրան պատօրի անձնաւորութեան հետ, յայտնելով որ նա ինքը իսկ այս քաղաքացի է և յայտնի զպիր-Ղազարի տղան է, որին իւր հայրը մանկութեան ժամանակ մի քանի ոսկով ծախել էր նէմէնցներին, որոնց մօտ նա մնալով ուսել էր «Տիրոջ խօսքը» և ստացել այս մեծ պաշտօնը, և թէ նա բոլոր «եղբայրների» հետ իրանց հասկացած լեզուով պիտի խօսի, այն ժամանակ ոսկերիչը սիրտ առաւ և հաղնելով իւր պահեստի հագուստները, ընկերացաւ քարոզչին։ Վերջինս նրան առաջնորդեց իւր տունը, ուր հաւաքուած էին բոլոր «եղբայրները»։ Իսկ այստեղից նրանք բոլորը միասին գնացին և ներկայացան մեծապատիւ պատօրին։

Քարոզիչ Աւետիքը պատօրին ծանօթացրաւ եղբայրներից իւրաքանչիւրի հետ, համառօտ ծանօթութիւններ տալով նրանց անցեալի և ներկայի վերայ, և յետոյ իւր եռամեայ գործունէութեան հաշիւը։ Այս հաշուից պատօրը բաւականութեամբ տեսաւ, որ քարոզիչ Աւետիքը այդ ոչ չատ երկար միջոցում կարողացել էր երեսուն և երկու հոգի լուսաւորչական հայերից դարձնել աւետարանականութեան։ Միայն չատ չ'ախորժեց տեսնելով որ ներկայացրած տումարի մէջ քսանեօթն հոգի պարտական էին կեղրոնական մնդուկին բաւական նշանաւոր գումարներ։ Օրինակ՝ բազազ Ցարութիւնը 1200 ռ., նրա անչափագ Ցովակիմը 1400 ռ., մուշտակագործ Ալէքսանը 1000 ռ., ոսկերիչ Կարապետը (մեր ծանօթ Կարօն) 1500 ռ., ոսկերիչ Սիմոնը 900 ռուբլի։ Սրանք բոլորը ստացել էին կանխիկ դրամ իրանց անհրաժեշտ պիտոյից համար։

Այնուհետև գալիս էին երկրորդական ճանապարհներով պարտապանները։

— Հիւսն Մաթէոսի տունը հրապարակական ճանուրդից ազատելու և նրա պարտատէրերը գոհացնելու համար ծախսուած էր 1100 ռուբլ։

— Նրա արհեստակից Սարգսին ձիու գողութեան մէջ անիրաւացի(?)բռնուած լինելուն պատճառաւ 18 ամսական բանտարկութիւնից ազատելու և ձիատէրը գոհացնելու համար 160 ռուբլ։

— Նախկին աւետարանական փականագործ Ցովհաննէսին իւր կինը և որդիկները իւր ուղղափառ դաւանութեան դարձնելուն համար ընծայ 300 ռ., այլ և նրա կնոջը և երկու որդոց մի-մի ձեռք հագուստ, արժէքը 120 ռուբլ։

— Գրագիր Դանիէլի համար սեղանատեսի պաշտօն ձեռք բերելու առթիւ երկու անձանց բարեխօսութիւնը վաստակելու համար նուէր 250 ռուբլ, այլ և նոր տարվայ օրը նոյն անձինքների համար ընծայ 2 գլուխ չարար և 2 ֆունտ թէյ—14 ռ. 40 կոպէկ։

— Փողահար Ասրիրէկի չհաս պսակը յաջողեցնելու համար նուէր 300 ռ.։ Եւ յետոյ այդ երկուսին աւետարանականութիւն ընդունելու համար նուէր մի միայարկ տուն, արժողութեամբ 490 ռուբլ։

Սրանից յետոյ նշանակուած էին մանր պարտապանների անունները կամ փոքր գումարով տուած նուէրները։ Սրանք այնքան աննշան էին, որ նրանց համար երկար թուումն մասանց անել աւելորդ է. կը յիշենք միայն մի քանիսը։ Օրինակ. Ցառաձագ գիւղացի Կարապետին նուիրուած էր 26 ռուբլու արժողութեամբ մի էշ, խառատ Ցովսէփին 90 ռուբլու արժողութեամբ հիւսնի գործիքներ, Բալլու գիւղացի Մկրտչին փոխ տուած էր 60 ռուբլ, երկու ջրաղացի քարեր գնելու համար. այսպէս իմացիր և մնացածները։

Ներկայ եղող երեսուն և երկու հոգուց միայն հինգ հոգի կային, որոնք «եղբայրութիւն» էին ընդունել առանց որեւէ նիւթական նպաստ ընդունելու։ Դրանցից մինը ոսկերիչ Գրիգորն էր։

Պարոն պատօրը այս վերջիններին առաւել մեծարանքով ընդունեց և ամեն տեսակ յարգանաց և գովեստի արժանի յայտարարեց նրանց։

Յետոյ նա սկսաւ խօսել մի բաւական ընդարձակ ճառ, որի մէջ զլխաւորապէս ձգտում էր հասկացնել «եղբայրներին», թէ նրանք ինչ մեծ և ատուածահաճոյ գործի են նուիրել իրենց աւետարանականութիւն ընդունելով, և թէ օրքան նեղութիւններ և վշտեր պէտք է կրեն իրանց այդ ընտրած ճանապարհով անյողդողդ առաջ գնալու համար, թէ օրքան դժուարութեանց պիտի հանդիպին և թէ որպիսի բարոյական սյժ պիտի գործ դնեն այդ դժուարութեանց յաղթելու համար։ «Դուք, ասում էր պատօրը, բաղդաւոր էք նրանով, որ առաջինն էք այդ լուսաւոր ճանապարհի վերայ ոտք դնողները։ Դուք կանչուած էք նրա դժուարութիւնները հարթելու և մաքրելու ձեր ապագայ ուրուանդի համար։ Այս իսկ պատճառաւ էլ դուք առաւելապէս պիտի վարձատրուիք երկրում առաջին նահատակների փառաւոր անունը և երկունքում «Տիրոջ» արքայութիւնը ժառանգելով։ Բայց որովհետև ձեզանից մի քանիսը, ինչպէս մեր քարոզիչ եղբայրը ինձ յայտնեց, դեռ ձեր ընտանիքը ձեր ընտրած լուսաւոր ճանապարհի վերայ հանելու չէք յաջողած, այդ պատճառաւ ձեր զոհաբերութիւնը կատարեալ չէ։ Դուք կամ չը պիտի ապրիք այն ընտանիքում, որ հեթանոս է, կամ եթէ ապրում էք՝ այդ հեթանոսներին էլ պիտի աշխատէք առաջնորդել դէպի փրկութեան ճանապարհը։ Ես գիտեմ, այդ բանի համար դուք առաջին անգամ, ինչպէս ասացի, կը հանդիպէք դժուարութիւնների, դուք կը բաղմացնէք ձեր թշնամիները, կը դը-

*) Տես «Մեղու» № 105։

մեղանչած կը լինի այդպիսով։ Պարզ է, որ կաթոլիկ հոգևոր վարչութիւնը գործում է պաշտօնապէս «Հայ-կաթոլիկ» անուան տակ և կառավարութիւնն էլ «Հայ-կաթոլիկ» համայնք է ճանաչում, էլ չը գիտենք թէ նա ինչպէս է համարձակվում կեղծել օրէնքի դէմ կազմելով «վիրախօսների համայնք», որովհետև վիրախօս կաթոլիկներին առանձին ընտրութեան հրաւիրելով՝ հեռանում է նա օրէնքից և մի նոր համայնք կազմում ինքնաստեղծ օրէնքով։

Այս ամենից յետոյ հայ-կաթոլիկներին մնում է պինդ պահպանել իրենց իրաւունքները և միանգամ բռնած արդար ճանապարհից չը շեղուիլ։ Ուրեմն.—հեռացնել իրենց եկեղեցուց օտար, վրացլեզուն բոլորովին և երեսփոխի ընտրութիւնը կատարել վիրախօսների հետ միասին իբրև միևնոյն եկեղեցու, միևնոյն ծխական հայ ժողովուրդ։

Սպանդար Սպանդարեան.

ԱԶԳԱՅԻՆ

ԲԱԳՈՒ

22 սեպտեմբերի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Արդէն պատ. «Մեղու»-իդ ընթերցող հասարակութեան քաջ յայտնի է, որ տեղիս նաւթային առևտուրը աննախանձելի դրութեան ենթարկվելու պատճառը, տեղիս յայտնի նաւթագործարանատէր շվէդացի Նոբէլն է։ Նա իւր առևտուրը մի այնպիսի կատարեալ յարմարութիւնով է շարունակում, որ այժմ մեր՝ թէ՛ հայ և թէ՛ թիւրք նաւթագործարանատէրեր — փոտոգէնավաճառները անկարող են նրա հետ մրցել առևտուրի շրջանում, ուստի սրանք ստացել են խոշանգված ու վերին աստիճանի յուսահատ տրամադրութեան մէջ յուզված։ Օրինակ. պ. Նոբէլը ունի այժմ Կասպեան ծովի մէջ 15—20 շոգենաւեր — առագաստանաւեր, որոնց միջում ահագին (25—35 հազար պուդ) երկաթեայ աւազաններ(резервуаръ)լինելով՝ փոտոգէնը գործարանից ուղղակի թափվում է նոյն աւազանները և այնպէս տանում են մինչև Վոլգա գետի ափը։—այնտեղից էլ վերթափելով մի այլ նաւերի մէջ՝ դարձեալ նոյն յարմարութեամբ տանում են մինչև Ռուսաստանի յայտնի քաղաքների երկաթուղիների կայարանները, ուր և արտահանում են թէ՛ փոտոգէնակառքերի և թէ՛ երկաթեայ աւազանների մէջ և ապա սկսում են վաճառել (բաղուից մինչև նոյն տեղերը հասցնելը հազիւ թէ 1% փչանում է Նոբէլի փոտոգէնը)։

Բայց մեր փոտոգէնավաճառները յիշատակված յարմարութիւններից ոչ մէկը դեռ չունին, նրանք իրանց գործարանում պատրաստված փոտոգէնը տանում են Ռուսաստան վաճառելու տախտակի տակառների մէջ, այնպէս որ մինչև մտադրված տեղը հասցնելը՝ գրեթէ շատ տակառներ դատարկվում են. տակառներից ինչո՞ւ է կաթում, և ի՞նչէ պատարկվելու պատճառը, մի ուրիշ անգամ կը խօսենք։ Պ. Նոբէլը իւր փոտոգէնը վաճառում է այն քաղաքներում օր. պուդը 1 ռուբլի (առանց տակառի) և այս մի ռուբլով վաճառած փոտոգէնի իւրաքանչիւր պուդին աշխատում է 35—40 կոպէկ. բայց եթէ մեր վաճառականները վաճառեն իրանց փոտոգէնը նոյն (1 ռ.) գնով, այն ժամանակ իւրաքանչիւր պուդին 35—40 կոպէկ կը մնասվեն։

Այհա՛, բանը ինչումն է. մեր փոտոգէնավաճառները, որ կամենում են 20 հազար պուդ փոտոգէն տանել Ռուսաստան, 20 հազար պուդի համար անշուշտ պիտի գնեն մի հազար հատ տակառ, իւրաքանչիւր տակառին վճարելով 7—8 ռ.։ Հիմա Ռուսաստանի փոտոգէն գնողները, երբ գնում են մեր վաճառականներից փոտոգէնը, տակառի փողը (7—8 ռ.) չեն հաշվում փոտոգէնի քարշի վարձ, այլ տակառի միջի զուտ (իստակ) փոտոգէնն են հաշվում. օր. եթէ 1 տակառ փոտոգէնի ծանրութիւնն է 20 պուդ, գնողները առաջարկում են նրանց քսան ռ. (պուդը 1 ռ.) և ոչ թէ 27—28 ռ., (պուդը 1 ռ. 35—40 կոպ.) և միևնոյն ժամանակ մատնացոյց են անում Նոբէլի ամեհի երկաթեայ աւազանները։ Ուրեմն, եթէ մեր փոտոգէնավաճառները սկսեն Նոբէլի վաճառած գնով (1 ռ.) ծախել իւրեանց փոտոգէնը, կը մնասվեն իւրաքանչիւր պուդին 35—40 կոպ.։ Հէնց այս տարի արդէն փորձը ցոյց տուաւ։

Յարգելի ընթերցող, հարցը միայն մի երկաթեայ աւազանի վերայ չէ, որ դուք գաք այն եզրակացութեան թէ՝ իւրաքանչիւր վաճառական մի անգամ մի աւազան պատրաստի Ռուսաստանում և այնպէս սկսի Նոբէլի հետը մրցել, այլ հարցը նրա միջումն է, որ մեր վաճառականները պիտի իրանց բոլոր գործերը Նոբէլի գործերի նման յարմարացնեն (ինչպէս յիշատակած ենք) և ապա սկսեն նոյն շրջանի մէջ մտնել։

Նոբէլի հարուածից արդէն շատ նաւթագործարանների գոները փակվել են և մնացածներն էլ, հա՛ այսօր, էգուց կը գոցեն։ Ցակառագործարանատէրերն էլ հետևում են թէ՛ թանգ և թէ՛ արժան, իրանց տախտակների, տակառների մնացորդները մէկ կերպ ծախել ու այնպէս ազատվել. տակառաշէն վարպետները ժողովելով իրանց կահ-կարասիքը՝ այնպէս վազում են Ռուսաստան գընալու (իրանց հայրենիք). այն խանութատէրերը, որոնք օրական վաճառում էին առնուազը 250—300 ռ. ապրանք, այժմ հազիւ թէ 40—50 ռ. վաճառում են, վերջապէս ամբողջ օրեր, եթէ թափառես, թէ՛ շուկաների և թէ՛ փողոցների մէջ, հազիւ թէ մի ծիծաղադէմ անհատի պատահես (բացի օղի և ծըխախոտ վաճառողներից, որով այս ճգնաժամում հէնց միակ են, որոնց առևտուրը նախանձելի է)։ Հարց. ի՞նչ է պատճառը այս տխրութեան ու մտատանջութեան և ի՞նչ է պատճառը, որ թէ՛ արհեստաւորները և թէ՛ վաճառականները ենթարկված են այս ճգնաժամին։ Պատ., միակ Նոբէլի առևտուրի յարմարութիւնը և մեր նաւթագործարանատէրեր — փոտոգէնավաճառների ագիտութիւնը — անհամաձայնութիւնը և անմիութիւնը։ Մեր վաճառականները ներկայ սրտաբեկութեան մէջ գէթ մի յոյսով են ապրում և իրանք իրանց վշտացած սրտերին սփոփանք են տալիս մի երազով—«Նոբէլը սնանկանալու է», և դարձեալ մենք յաջող կերպով շարունակելու ենք մեր նաւթի լայն առևտուրը։

Յարգելի ընթերցող, մեր այս թուլամորթ վաճառականների երևակայական, սնոտի յոյսերը նմանվում են, եթէ չեմ սխալվում, տիեզերահռչակ Մոլլա-Նասրադինի նիհար էշի առածին, որ ասում է՝ «Մի՛ մեռնիլ էշս, գարունը կը գայ, կանաչ խոտ կը բնի»։ Պատուելի շփոթված վաճառականներ, միք յուսահատվիլ, լաւ իմացէք, որ մեր բոլոր առևտուրի ղեկը ձեր (նաւթի ոյժով) ձեռքն է, մեր ամենակարևոր պիտոյքների պահանջները ձեր գլխի և ուղեղի մէջ է պարունակվում, լաւ մտածեցէ՛ք և այնպէս կատարեալ խորհեցէք—միութիւն, համաձայնութիւն—ընկերութիւն կազմեցէք, մի ձայն, մի ոյժ ժողովեցէք, առէ՛ք այն վանդների առաջը, որոնք մեզ սովամահ են ապառնում, հեռևեցէ՛ք առանց վհատելու, որ օտարներին (Նոբէլ) հեռացնէք մեր մայրենի երկրից, աշխատեցէք ձեր ձեռը առնել այն անդին (նաւթ) առևտուրի ղեկը, որը բնութիւնը իւր անսահման առատութիւնով ու բարութիւնով շնորհել է մեր երկրին, և վերջապէս աշխատեցէք խելացի միջոցներով օտարներից վրէժխնդիր լինել, ձեզ ու մեզ ճնշողներին մրտրակելով՝ վռնդել առևտուրի լայնածաւալ ասպարէզից, և ոչ թէ ըզբաղուիլ տղայամտութիւնով, ցնդաբանութիւնով,—հա՛ այսօր, էգուց, Նոբէլը կը սնանկանայ և այլն, դրանք միք երազիլ, սրանցով ձեր ամենաանհրաժեշտ կարիքները չէք կարող լրացնել և իզուր ժամավաճառութիւն կ'անէք։

Քաջայոյս ենք, որ մեր այս մասնաւոր կերպով արած առաջարկութիւնը յարգանք կը գտնի մեր պատ. փոտոգէնավաճառներից։ Կ'սպասենք մի առժամանակ։

Զատիպատի.

ԱԽԱԼՑԽԱ

16 սեպտեմբերի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Գագէթաճի ագրար։ Խէյլի վախթ գլլի կը որ հրամանքիդ զիր չեմ գրել, հալ ու խաթրդ չեմ հարցուցել։ Շիտակ խօսք դավջայէն էաև վրաներս սիրտ չը մնաց, անքան օր սաղ քաղքով նեղութան ու չքաւորութան մէջ ենք, քէսատութենը Ախսխայի մէջ ան դուռը հասուց, ա՛ն դուռը հասուց մեզի, որ ալ ոչ ձեռք թէփրէմիշ գըլլի, ոչ ոտք։ Քանի տարի է հէրքէշ իրան ու իրան օղլուշաղին անցին վրայ շուարիշ մընացել է։ Լսածիս ձեր թարաֆներն ալ բան ու գործ, առուտուր չը կայ եղել, ձեր ալ ոսկորն ելել, բիերուդ էմ է առել։ Զեռքերէս ի՞նչ կուդայ, էֆէնդիմ, չա՛րան ինչ, մեղաւոր բերանովս խնդրիմ կը Ամենասուրբ Երրորդութիւնը ինքը վերատէն մէլում հասցնէ, մէ տէղէմ մէ ողորմութան դուռմ բանայ հայ-քրիստոնա աղգին համար։ Աս բաներս գրէք ձեր էմ ձեր բարեկամների ատելութիւնը, ազգականների արհամարհանքը, դուք կը յարուցանէք ձեր ընտանեաց մէջ խռովութիւն, անհամաձայնութիւն և շատ անգամ կռիւ։ Բայց այս բոլորը ձեզ չը պէտք է վրհատեցնեն։ Դուք չը պէտք է կորցնէք ձեր արիութիւնը, այլ միմիայն անձանձիր աշխատէք։ Մի օր դուք ուրախութեամբ կը տեսնէք, որ վերջապէս հասաք ձեր սուրբ և վսեմ նպատակին։ Մի օր դուք հպարտութեամբ կը տեսնէք, որ ձեզանից իւրաքանչիւրը մի-մի ընտանիք և այնուհետև մի ամբողջ սերունդ հեթանոսութիւնից դարձնելու պատճառ եղաք, և այն ժամանակ ձեր հոգիները համարձակ կը դիմեն դէպի Նրան՝ որ կանչումէ. «Եկէք իմ հօր օրհնուածներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը»։

Այս և սրա նման շատ բաներ երկար խօսում էր պարոն պատօրը, և երբ իւր ճառը վերջացրաւ, նա հարցրաւ ներկայ եղողների կարծիքը իւր ճառի մի քանի կէտերի վերաբերմամբ։ Բոլորը, ի հարկէ, պատօրի յայտնած մտքերի հետ համաձայն էին։ Միայն սակերիչ Գրիգորը թոյլատրութիւն խնդրեց իմանալու թէ՝ «արդեօք, իբրև բացառութիւն, իրեն չի՞ ներուիլ, որ ինքը իւր համար աւետարանական մընայ, իսկ իւր կնոջը և երեխաներին թոյլ տայ իրանց մինչև այժմ դաւանած կրօնը պաշտելու»։

— Մենք հեղութեան աշակերտներ ենք, համոզիչ եղանակով պատասխանեց պատօրը, և ոչոքի չենք կարող ստիպել, որ նա զօռով մերը աշակերտը լինի։ Բայց ոչոր մի անգամ մեր «եղբայրութեան» մէջ է մտնում, նա պէտք է մարդասէր լինի, և չը կամենայ, որ մարդկանց հոգիները կորչին։ Դուք էլ, որ մեր սիրելի «եղբայրներից» էք, նոյն հոգւով պէտք է վառուիք, այսինքն՝ պէտք է աշխատէք, որքան կարող էք, մոլորեալ հոգիները փրկելու, և ոչ թէ թոյլ տաք, որ նրանք կորչին և գեհենի բաժին դառնան։ Այս ամենը գիտենալուց յետոյ, ձեր կամքից է կախուած—թողնել ձեր ընտանիքը մոլորութեան մէջ կամ դարձնել նրանց ուղիղ ճանապարհ։ Բայց և այնպէս, աւելացրաւ պատօրը, դուք որ առանց չահախնդրութեան մտել էք մեր «եղբայրութեան» մէջ (որովհետև պատօրը փորձով գիտէր, որ այդպիսակ հաւատափոխները հաղուագիւտ էին), դուք չը պէտք է արատաւորէք ձեր անբիծ անունը, թոյլ դնելով այն մեծ գրծի մէջ, որի համար կանչուած էք «Տիրոջ» կամքով։ Եթէ դուք թշնամի չէք այդ ընտանիքին, ուրեմն գործով պէտք է ցոյց տաք ձեր բարեկամութիւնը, փրկելով նրանց բոլորի հոգիները անդառնալի կորուստից։

Պատօրի խօսքերը խորը ներգործեցին սակերչի վերայ և նա բոլորի վկայութեամբ խոստացաւ «չ'արատաւորել իւր անբիծ անունը»։ Սրանից յետոյ պատօրը հրաւիրեց «եղբայրներին» Աստուծուն աղօթելու։ Այս ընտանեկան հանդէսն էլ վերջացնելուց յետոյ իւրաքանչիւրը քաշուեցաւ իւր տունը։

Ճանապարհին քարոզիչ Աւետիքը, Կարօն և Գրիգորը միասին էին գալիս, որովհետև նրանց ճանապարհը մէկ էր։

— Գրիգոր եղբայր, խօսեց Աւետիքը, դու լաւ ըմբռնեցիր պատօրի միտքը։

— Այո՛, որքան կարողացայ, պատասխանեց Գրիգորը, նա ասում էր, որ ես պէտք է աշխատեմ իմ ընտանիքն էլ մեր հաւատին դարձնելու։

— Ապրիս, ճիշդ այդպէս է։ Այժմ ինչ ես կարծում, պիտի կարողանա թէ՞ ոչ։

— Մեծ դժուարութիւն եմ տեսնում այս ձեռնարկութեան մէջ, հետևապէս սկզբից ոչինչ հաստատ բան չեմ կարող խոստանալ։

— Ի՞նչ դժուարութիւն պէտք է լինի, եղբայր, մէջ մտաւ Կարօն, քո կինը իմ կնոջից աւելի պինդ հայ չէր լինի. բայց ես նրան մոմի պէս կակղացրի։ Այստեղ հարկաւոր է առնական հաստատամտութիւն։ Եթէ ունիս՝ ուրեմն կամքդ կատարուած է։

— Սխալվում ես, ոչինչ իւր, այլ «Տիրոջ» կամքը, նկատեց քարոզիչը։ Իսկ եղբայր Գրիգորը այդ առնական հաստատամտութիւնը ունի. ես գիտեմ, երբ նա մտադրուեցաւ մի բան անելու, արգելքները նրա համար նշանակութիւն չ'ունին։

— Ես միայն իմ ունեցած ոյժս գործ կը դնեմ, թէ ինչպէս կը յաջողի, Աստուած գիտէ,

— Այո՛, ոյժ պէտք է գործ դնել, աւելացրաւ Կարօն, կինը միայն ոյժի առաջ է յաղթվում։ Ես մի քսան անգամ ծեծել եմ կնոջս մինչև նրան ճանապարհ եմ բերել։

— Ո՛չ, առաջ քաղցրութեամբ և սիրով... նկատեց քարոզիչը և լռեց, թողնելով որ խօսքի մնացորդ բառերը, «իսկ յետոյ ոյժով և փայտով» իրենք իրենց հասկացուին, որովհետև քարոզիչը զգուշանում էր իւր «սէր և խաղաղութիւն» քարոզող մտքերին դաւանող բառեր արտասանել։ Իսկ ձեր այդ գործը, մի փոքր լռութիւնից յետոյ շարունակեց նա, մեծ պարծանք կարող է բերել մեր «եղբայրներին» և գլխաւորապէս մեր պատօրին, որը իւր բոլոր ճիգը գործ է դնում մեր պատիւը և անունը բարձր պահել բոլոր Եւրոպայի և Ամերիկայի միսիոնարական և աւետարանական ընկերութիւնների առաջ։ Վերջին բառերը առանձին շեշտահարութեամբ էր արտասանում քարոզիչը, ոչ թէ նրա համար, որ նրանք մի որևէ նշանակութիւն ունէին, այլ որպէսզի Գրիգորի վերայ՝ նրան անծանօթ այդ բառերով աւելի մեծ ներգործութիւն անէր։

— Կ'աշխատեմ, անվստահ ձայնով պատասխանեց Գրիգորը քարոզչին և նրա ձեռքը սեղմելով ուղղուեցաւ դէպի իւր տան ճանապարհը։

— Իսկ մենք կը յուսանք, վստահ ձայնով նրա ետևից աւելացրաւ քարոզիչը և հեռացաւ Կարօի հետ։

(Կը շարունակվի)։

Մ—ցեան.

կարծես թէ հէրքէշին համար հէ-
ռիք չէր, գազէթաճի աղբար, հիմի
ալ օրը մէջ չէշերմ գալմաղալ կը բա-
ցուի մեր քաղքին մէջ, ալէմ աշ-
խարհք կարծես թէ իրար կը խառ-
նուի, մեծուռնանց ըսածին պէս օրը
մէջ անգամ «շունը շապիկ կը հագ-
նի, կատուն վարտիկ»: Գիտեմ, հի-
մի հրամանքդ կըսես թէ ի՞նչ, դէր-
տերդ ի՞նչ է, Զէնիաթքէր աղբար:

Է՛հ, էֆէնդի, Դաւիթ Մարգա-
ռէին ըսածին պէս «զո՞ւրն ասեմ, կամ
զո՞ւրն խոստովանիմ»: Ջանմ, հէլբէթի
ի՞նչ, էհ թէ որ ատքան հավաս ու-
նիս նէ, գօռի ջանլամ, ատոնց էտև
ես ալ քիչ-քիչ գրեմ կը, առ, աշ-
նան էրկան գիշերները կարդա:

Աս պիրինճի գրովս, գազէթաճի
աղբար, գուղեմ որ հրամանքիդ մէ
պզտի տեղեկութենմ տամ իսի մեր
Հայ-Ֆրէնկներուն գործուն համար:

Թամամ հինգ վեց ամիս գըլլի,
որ մեր Հայ-Ֆրէնկ աղբրտիքը պա-
լըղ օթի կերածի պէս ին եղել ինչ
էնելիքները պիլէ խեղճերը չիտեն:
Սէպէպը վեօ՞վ.—ատոնց պատուելի
վարդապետները, որ հէրքէշին քթէն
բռնած, ուզածներուն պէս պտտցնեն
կը: Օղլուշաղ չ'ունին, դարտ ու դա-
սավէի չ'ունին, հացերը դրած, պա-
նիրը վրան, կուտեն, խմեն, արթղ
մեր եախան կը բռնին, օրը մէ զա-
զուխմ դէմ կուտան մեզի: Անցած
դացածները հէլէ մէ կողմ թողնինք,
հէլէ անցուկը մուցուկ էնենք, ես
հրամանքիդ սալթ ատոնց ու ռա-
պատցի Ֆրէնկներուն մէջ եղած իսի
վերջին ղամաղալներուն համար գը-
ռեմ, գազէթաճի աղբար:

Լուսահոգի կարապետ հայր սուրբն,
որ մեզի էրգուրումն բերից (քէշկէ
ոչ բարով էինք եկել. հէրնէյիսէ)
Ախսխա, 200—250 տուն աս Ֆրէնկ
հայերն ալ մեզի հետ եկան: Մեզի
պէս անոնք ալ պլանին մէջ իրենց
համար մէ ժամըմ շինեցին մարդիկը
ու իրենց պատարագն ու աղօթքը
կէնէին իրենց հայ լեզուովը, տեսր
երկու տարի առաջ մեր ու անոնց
ասմունքին մէջ հէչ զանազանութիւն
չը կար, գիտե՞ս, գազէթաճի աղբար:
Շատ անգամ եղել է որ մենք ա-
նոնց ժամն ենք գնացել, անոնք մերն
են եկել, չունքի լեզուներս ու ազ-
գութիւններս մէկ է եղել, անքան որ
մենք հայ ենք, անոնք Ֆրէնկ: Ցա-
մէն գուրս ալ, գիտե՞ս գազէթաճի
աղբար, մենք միշտ իրարու հետ ենք
եղել, անոնց հետ երթևեկութիւն
ունեցել, իրարու հարսնիքի ու հը-
բաւէրքի պատահել, էսնէֆի, եօլի
մէջ, կէնա անպէս: Մեր աղաքը ա-
նոնց վարժաներուն մէջն են կարդ-
ցել, մեր վարժապետները անոնց քով
վարժապետութիւն են էրել, մէ խօս-
քով մարդիկը հայ են, մեզի պէս
քրիստոնա, ս. Գրիգոր Լուսաւորչի
թոռներն են, անքան որ մէջտեղը
սալթ իսի Ֆրէնկ անունը կայ, վէս-
սէլէմ: Հըմը մէկ երկու տարի կայ
որ, գազէթաճի աղբար, բանը ու-
րիշ չէշիտ եղաւ, սէպէպը ըսին ա,
մեր պատուելիները: Հըմը թուղթս
լցուաւ, ալ տեղ չը կայ:

Հարցանողաց յատուկ բարև կէ-
նիս լինձէն, գազէթաճի աղբար:

Զէնի-Ֆէնդի.

Ղ Ա Զ Ա Խ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Ղազախի բոլոր հողերը կարելի է
երկու անհաւասար մասերի բաժա-
նել. 1) ա ղ ա լ ա ր ն ե ր ի հողեր և 2)
ոչ-աղալարների հողեր: Մեր այս գա-
ւառում առաջին կարգի հողերը
կազմում են ամենագեղեցիկ, արգա-
ւանդ, ջրառատ դաշտերը. ամենայն
կերպով այդտեղի բնակիչները հայի
կողմից միշտ բարեկեցութեան մէջ են,
ապահով են, ուր հայ, ցորեն չի լինի,
այդ մեծատարած դաշտերում ան-
համար դէղերը լինելի հասկերով
մարդու ուշադրութիւնը իւրեանց վե-
րայ կառնեն: Իսկ երկրորդ կարգի
հողերի մեծ մասը պտղառատ չեն,
բացի առաջինների կից տեղերից, ո-
րոնք մեծաւ մասամբ պատկանում են
մահմեդականներին: «Աղալարի տեղեր»
կոչուած դաշտերը պատկանում են
մահմեդական ազգաբնակութեան մաս-
նաւոր անձանց. դրանք, այդ ա ղ ա-
լ ա ր ն ե ր ը բնութիւնից—եթէ այս-
պէս կարելի է ասել — կատարելապէս
ապահովուած լինելով, այլ ևս ոչինչ
աշխատութեան, ոչինչ ձեռագործ ար-
հեստի ձեռք չեն տալիս, այլ ան-
հոգ կեանք են անցկացնում, առանց
իրենց սեպհական հողերի մշակու-
թեան գործի մէջ մասնակցութիւն
ունենալու. այդ բաւական չէ. այդ
ազնուականներին պատկանում են և
երբեմն ահագին տարածութիւն ու-
նեցող անտառներ *), որոնց փայտը
աղալարները ցանկացածին պէս կա-
մեցողների վերայ վաճառում են: Այս
էլ կայ, որ այդ մահմեդական ազ-
նուականների դասը ոչինչ զգալի օ-
գուտներ քաղել իրենց բերրի հողե-
րից՝ ամենևին չեն կարողանում, այլ
անխութութեամբ կիսու յանձնում են
ցանկացողներին մեծաւ մասամբ, թէև
բացառութիւն էլ է պատահում: Երկ-
րորդ տեսակ պայմանների տակ գտնը-
վող հողերը՝ դարձեալ պտղաւէտ մա-
սերը պատկանում են մահմեդական
տարրին, իսկ միջակ պտղաբերու-
թիւն ունեցող և գրեթէ անարդիւնք
մասերը հայերին են պատկանում: Հո-
ղերի գործածելու համար հայերն ամ-
բողջապէս և մահմեդականների մեծ
մասը տէրութեանը մի որոշեալ հարկ
են վճարում, իսկ աղալարները ոչինչ
չեն վճարում:

Անյիշելի ժամանակներից սկսած
ժողովուրդի մէջ կռիւներ շատ են
պատահած, որ յաճախ ըստ ասիա-
կան սովորութեան արիւնհեղու-
թեան է հասած: Մի պարզ և բա-
ցատրութեան անկարօտ փաստ է այն
նկատողութիւնը հողի մասին, որ գիւ-
ղացին իւր հարազատ եղբօրը, մտե-
րիմ բարեկամին և սիրելի ազգակա-
նին անխնայօրէն կը պատժի, կը կռուի
այդ նկատմամբ... Նա աշխարհումս
ամենայն սուրբ բան առ ոչինչ կը
համարի և այդ միմիայն հողի տի-
րապետութեան համար. և այդպէս
գիւղացու համար ոչինչ ծանրակշիռ
խնդիր, վերին աստիճանի ինքնամո-
ռացնող առիթ չը կայ, բացի հողա-
յին կնճռոտ խնդիրը:

Դեռ այն ժամանակ, երբ այժմ
օրէնք է համարվում եղել, երբ թոյ-
լը զօրեղի ծառան, սարուկը, գերին
էր, ահա՛ ճիշդ այն միջոցներում
զօրեղը իւր թրի ու զէնքի զօրու-
թեամբ կարողացել է շատ ողորմելի
մարդոց ստիպել իրեն խոնարհուե-
լու, իրեն տեղի տալու, հակառակ
դէպքում եղկելի թշուառականը
հաւի պէս մորթվում էր: Այդ-
պէս այսևայն մահմեդականը տի-
րապետելով լայնատարած հողե-
րի, իրեն ա ղ ա, ա ղ ա լ ա ր ա-
նուններն է տուել և ստիպմամբ ժո-
ղովուրդին նոյն բառերը սերտել
տուել: Այդ նոյն ժամանակի ինք-
նատեղծ ազալարները պահպա-
նում են իւրեանց ցեղային սեպ-
հականութիւնները, ստացուածները,
կալուածները: Այդ միևնոյն ժամա-
նակամիջոցում հայերը, այդ Աւե-
տարանի հնազանդ և հաւատարիմ
որդիքն ուրիշների կատարած գոր-
ծերից դաս առնելով՝ նրանք ևս սկը-
սել են իրենց հարևանին, մերձաւո-
րին նեղացնել բոլորովին այլ կեր-
պով. նրանց մէջ մի գիւղն սկսել է
ուժով, փայտի զօրութեամբ յափշտ-
ակել մի ուրիշ գիւղի հողերը և
իրեն սեպհականել:

Այդպիսի օրինաշներ այնքան
բազմաթիւ են մեր մէջ, որ ես
այստեղ միառմի յիշել չեմ կա-
րող, միայն մի երկուսն այս-
տեղ մէջ կը բերեմ. այդ կարգին կա-
րելի է վերադրել մասնաւոր մտքով
առած և Խաչթառակի հողերը, որ
բաւական տարիներ սրանից առաջ
յափշտակել են հաջաջրեցիները.
յիշեալ հողերը Խաչթառակի և
Ռևազլուի հողերի մէջ մի տեսակ
խրտուիլակ են կազմում, որ մի եր-
կար և շարունակ կսիների պատ-
ճառ են եղած, դրա սահմանները
անորոշ ժամանակներում յետ ու ա-
ռաջ են գնացած: Եւ ամեն մի ան-
դամ հողային սահմանների մասին
ծագած անբաւականութեանց ժա-
մանակ մի գիւղ իւր համար բերել
է տուել մի երկրաչափ, բայց տե-
սէք թէ զարմանալին ինչի մէջն է
կայանում. զարմանալին և միանգա-
մայն ծիծաղելին նրա մէջն է, որ
երկրաչափը յանուն իւր գրպանին և
ոչ յանուն արդարութեան, իրեն փող
վճարող և բերող գիւղի հողային
սահմանները մի անորոշ չափով ընդ-
լայնում է ի վնաս հակառակոր-
դի, ընդհանրութեան. նա մէկին շա-
հելու, խաթրը չը կորցնելու համար
միւսի հողերը խուզում է և շա-
րունակաբար մեծամեծ անկարգու-
թեանց պատճառ դառնում, ինչպէս
որ մօտ անցեալներումս պատահեցաւ:
Բայց երկրաչափը հեռանայ թէ չէ,
դարձեալ արիւնհեղութիւն, դար-
ձեալ նորանոր աղմուկներ և անկար-
գութիւններ. այդտեղ գլուխներ են,
որ փայտի հարուածից երկու մատ
խորութեամբ ճեղքուածից կաթիլ-
կաթիլ արիւն է հոսում:

Մօտ 4—5 տարի սրանից առաջ
Խաչթառակի բնակիչները հողի մեծ
պակասութիւն զգալով և մտաբերե-
լով որ Սալդախ կոչուած գիւղատե-
ղը և նրա ամբողջ հանդը ոչ հեռու
անցեալում ուժով իրենց ձեռքից
խլել են հաջաջրեցիները, որոնք
թուով անհամեմատ մեծ են եղած
և են իսկապէս այժմ էլ, նրանք
ցանկանում են դարձեալ իրենց եր-
բեմեան հողերը գրաւել, ուստի լը-
ծած գութանները քշում են խոտ-
հարկները և սկսում են հերկել:
Սակայն շատ ժամանակ չէ անցնում
և հաջաջրեցիները*) այդ բանը նը-
կատում են: Նրանք իսկոյն և ՝ եթ
մահակներով, բահերով, քարերով
զինուորուած ահագին գոռոցով յար-
ձակվում են գութանաւորների վե-
րայ այնտեղից վանելու նպատակով:
Ծագում է խիստ կռիւ, շատերի գը-
լուխները ջարդվում են, շատերից
արիւն է հոսում, սակայն հաջաջրե-
ցիները բազմաթիւ լինելով, խաչ-
թառակցոց ստիպում են այդ տե-
ղերը թողնել, իսկ նրանք յամա-
ռութեամբ իւրեանց հայրենական
երբեմեան տեղերը զիջանել չեն կա-
մենում և մեծ ջարդ ուտելուց յետ-
ոյ հանգիստում ներկայ տիրապետ-
ղին են թողնում, իսկ հակառակորդ-
ները վերցնում են բոլոր գութան-
ների շղթաները, խոփերը, ձեւիչ-
ները իբրև գերի և տանում հաջա-
ջուր, որի համար պարտաւորվում
են մի փոքր տուգանք վճարել: Այս
գործը երկար տարաձայնութեանց և
դանդատների պատճառ է դառնում,
որը շուտով վերջացնելու համար
ողջ հաջաջուրը իւր միջից ժողո-
վում է մի հազար ռուբլի, տալիս
պ. Տիրան Տէր-Յովհաննիսեանցին,
որ գնայ աշխատի թէ՝ Սալդախը նո-
րից իրենց վերայ հաստատելու և
թէ՝ ուրիշ հողեր գրաւելու համար
Ջանայ: Նա շուտով մի երկրաչափ է
բերում, որն սկսում է գիւղի բոլոր
սահմանները ընդարձակել ի վնաս
միւս գիւղերի: Այդ պ. երկրաչափը
նախ և առաջ Ներքին-Աղդանից բա-
ւական տարածութեամբ հողեր է
կտրում հաջաջրեցոց նուիրելու մտ-
քով, ապդանեցիները արդելք են լի-
նում, չեն թոյլ տալի նրան իւր մտ-
ադրութիւնը կատարելու, ուստի
նա հրամայում է խոչընդոտ եղող-
ներին ծեծել. մի քանի գիւղացի-
ներին այնքան ծեծում են, այնքան
ջարդում են, որ ողորմելիները հա-
դիւ ոտքի վերայ կանգնում են, և այդ
խղճուկներին ձեռքերը կապոտած տա-
նում են բանտարկում մի գարշա-
հոտ զոմի մէջ... Այդպիսի կարգադ-
րութիւններ նա շատ էր կամենում
կատարել, բայց նրա ոչ մի անօրէնու-
թիւնը ընդունելութիւն չը գտաւ:

*) Ցանօթ.: Հաջաջուրը գտնվում է Աղստեֆի ձախ ափի վերայ հեռու, իսկ Սալդախը աջ ափին և բոլորովին անջատուած:

Սրա վերայ մի-երկու տարի էլ ան-
ցաւ և ահա՛ անցեալ օգոստոսի ըս-
կզբներում Նոյն պ. Տէր-Յովհաննի-
սեանցը Թիֆլիսից մի այլ երկ-
րաչափ բերեց, որը ոչ միայն
Սալդախ կոչուած տեղերը կրկին
տուեց հաջաջրեցոց, այլ և հին
սահմանագիծն անցաւ, զիգզագ գոր-
ծեց և խաչթառակցոց վարելահո-
ղերից և արօտատեղերից 20—30
դէսեատին հող կտրեց և տուեց հա-
ջաջրին: Դրանով նա չը բաւականացաւ,
անցաւ. միւս սահմանը և մի այդքան
էլ Ռևազլուի տեղերից կտրեց տուեց
նոյն գիւղացոց. դեռ շիլափլաւն
էլ այդպէս սրտով բաժանել չեն
կարողանում, ուր մնաց...

Գիւղերի մէջ այնքան այսպիսի
խնդիրներ են յարուցուած, որ չեմ
կարող այսպէս բարեմիտ կառավա-
րութեան ուշադրութիւնը չը դարձ-
նել այդպիսի անկանոն կարգադ-
րութեան վերայ. եթէ մէկ գիւղին
բաւականութիւն են տալիս միւսից
կտրել-պակասցնելով, ես դրան ան-
կարդութիւն կարող եմ անուանել:

Հեռվհեռ ամենայն տեղ ժողո-
վուրդը բազմանում է, բայց հողերը
չեն աւելանում, ուրեմն պակաս են...

Սրանով կամենում եմ ասել, որ
երբ կամենում են մի գիւղի հողերն
աւելացնել, հարկաւոր է անշուշտ
միւսի ժողովուրդի թիւն էլ իմա-
նալ և հողերը ըստ թուին մարդ-
կանց վերայ բաժանել, ապա թէ ոչ
«լեռնին կը լինի չար քան զառաջինն»:

Այս ծանրակշիռ և կենսական
խնդիրը պէտք է որ մոռացութեան
չը տրուի:

***

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտական ապստամբութեան մաս-
նակցողների մասին կազմուած մեղա-
դրական արձանագրութեան գլխաւոր
կէտերն են. ժողովրդի զրգռչութիւն եւ-
բօպացիներին կոտորելու համար, Ա-
լէքսանդրիայի այրելը և հաչտութեան
դրօշակը ի չարն գործածելը:

— Լորդ Դէօֆֆերինը Բ. Դրանը
յայտնեց, որ անգլիացիք Եգիպտոսում
կը մնան մինչև եգիպտական զօրքի
վերակազմուելը և բարեկարգութիւնը
բոլորովին վերականգնելը:

— «Ռուսական Լեհաստանի և Գեր-
մանիայի տնտեսական ազգանս» վեր-
նագրով մի գրքոյկ հրատարակուեցաւ
Գերմանիայում վերջին օրերումս: Գը-
ք-ոյկի հեղինակը այն կարծիքի է, որ
Ռուսաստանի և Գերմանիայի մէջ մօ-
տակայ պատերազմը անխուսափելի է:
Եթէ որ ռուսաց կողմից կը շարունակ-
ի ատելութիւնը դէպի գերմանացիները,
ասում է գրքոյկի հեղինակը, այն
ժամանակ գերմանացիների համար ու-
րիշ ոչինչ չէ մնում անել, եթէ ոչ
Ռուսաստանի սահմանները յետ քշել
մինչև Վիլնա և Գնէպր գետերը և Լե-
հաստանը ոտքի կանգնեցնել: Այսպէ-
սով Գերմանիայի առևտուրը, որը այ-
ժմ ռուսաց ծանր մաքսերի պատճա-
ռով բոլորովին ընկած է, նոր կեանք
կ'ստանայ:

— «Times» լրագիրը ապացուցանում
է, թէ եգիպտական հարցը վճռելու հա-
մար Անգլիան դաշնակիցների հարկա-

ւորութիւն չ'ունի։ Անգլիան չէ կամենում Եգիպտոսին տիրապետել, այլ նա կամենում է այդ երկիրը կառավարել ընդհանուրի օգտի համար, հետևաբար Անգլիայի հոգսը չէ թէ Եւրոպական միւս տէրութիւնները ինչ աչքով են նայելու նրա վարմունքի վրայ։ Անգլիան բոլոր Եւրոպայի դաշնակիցն է և ուրեմն իրան ձեռնարկութիւններին հաստատութիւն տալու համար նա պէտք չ'ունի մասնաւոր դաշնագիրներ կազմել այս կամ այն տէրութեան հետ։

— Արաբի և Տուլբա փաշաների և նրանց 80 հոգի ընկերների վրայ սկըզբնական քննութիւնը սկսուած է։ Քննութիւնը առայժմ թէև շատ ծածուկ է պահվում, բայց դատաստանը հրապարակաւ է կատարվելու։

— Պէրու և Չիլի հասարակապետութիւնների (Ամերիկայում) մէջ խաղաղական բանակցութիւնները կտրուեցան, որովհետև Չիլիի կառավարութիւնը չէ կամենում ոչինչ զիջողութիւն անել։

— Բացի այն աստիճաններից, որոնցով անգլիական կառավարութիւնը վարձատրեց Ուօլսլի զօրապետին և Սէյմուր ծովապետին Եգիպտոսը նուաճելու համար, վերջիններս 50,000 լիրա ստերլինգ դրամական միանուագ նուէրներ էլ ստացան։

— «Times» լրագրի Փարիզի թղթակցի ասութեամբ, Բիսմարկը յայտնել է իբր թէ Անգլիան մտադիր է Սուէզի ընկերութեան մէջ ձայների մեծամասնութիւնը ձեռք բերել, Լէսսէպս ֆրանսիացուն իւր իրաւունքներից զրկել և նրա տեղ մի անգլիացի նշանակել տալ։

— Բոլգարիայի պատերազմական պաշտօնեայի օգնական նշանակուեցաւ ռուսաց գլխաւոր շտաբի ձեմարանի պրոֆէսսոր, գնդապետի օգնական Ռիդիգերը։

— Կ. Պոլսի նախկին ռուսական դեսպանը, Լոբանով-Ռոստովսկի, նոյն պաշտօնի վրայ կարգուեցաւ աւստրիական կայսերութեան մօտ։

— Թագաւոր Կայսրը Ղարադաղի իշխանին մի լաւ արաբական նժոյգ ընծայեց։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ն. Տէր-Ղևոնդեանի «Մայրենի լեզու, այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար» գրքոյկի իններորդ տպագրութիւնը աշխատասիրողից։ Տըպուած է Թիֆլիսում, 8. Մարտիրոսեանի տպարանում։ Գինն է 35 կոպ.։

* * *

Պ. Ա. Մելիք-Այվազեանը խնդրում է մեզ տպել հետեւեալը.—Խոնարհաբար խնդրում ենք այն պարոններից, որոնք յանձն առան Հալաբարի ընթերցարանի համար գործակալութեան պաշտօն կատարել, անյապաղ ուղարկեն մեզ իրանց մօտ գտնված անդամակցական թերթերը։

* * *

Մի ժամանակ մենք մի յօդուածում խօսել էինք Թիֆլիսի Հալաբար կոչուած Թաղի օրիորդական դպրոցի անհանձնելի դրութեան մասին, և իրաւունք էինք տուել մեզ հրաւիրելու քաղաքավարութեամբ թեմական տեսուչ պ. Բարխուդարեանի ուշադրութիւնը այնտեղ կատարվող ինտրիգաների վերայ, որոնք միայն դպրոցի կատարեալ անկմանը կարող էին նպաստել։ Այդ յօդուածի առիթով «Արձագանքը» տեղ տուեց մի քանի խայտառակ գրուածքների, որոնք անձնաւորութեան պատիւն արատաւորելու նպատակով էին միայն գրուած, և հէնց այդ ամօթալի գրուածների մէջ թեմական տեսուչը այնպիսի բարձրութեան վերայ էր բազմում, որին մօտենալու իրաւունք չէր տրվում «Մեղուին», թեգուզ խորհուրդ տալու համար։ Այժմ ինչպէս տեսնում ենք, մի զարմանալի և տխուր տեսարան է ներկայացնում Հալաբարի այդ դպրոցը, որտեղ ինքնակոչ տեսուչ էլ է. բնաւ գալիս, բայց դրան նշանակողը խաւարի մէջ անյայտ է մնում դեռ։ Ո՞րտեղ է թեմական տեսուչը... «Մշակը» այդ հարցմունքին պատասխանելով պ. Բարխուդարեանին կատարելապէս անընդունակ է դտնում թեմական տեսչութեան համար։ Մենք կարծում ենք, որ պ. Բարխուդարեանը իրրև հասկացող մարդ, ինքն կը խոստովանի, որ թեմական տեսչութեան պաշտօնը իւր բանը չէ և բացի վնասից ոչինչ օգուտ չի կարող բերել այդ առաջարկումը։

* * *

ԶԱՆԳԵԱԶՈՒՐԻՑ մեզ գրում են.—Սեպ. պ. զաւառապետի կարգադրութեամբ մարդիկ են կանգնած աւազակապետ պ. Լալին իւր խմբով ձերբակալելու համար։ Քարվանների երթևեկութիւնը սկսված է։

* * *

Վաղարշապատից պ. Ա. Արարատեանցը մեզ գրում է, թէ այնտեղ հանգանակութեամբ ժողոված փոգներով մի դպրոցանպաստ շինութիւն է կառուցանվում, որը տեղական երկսեռ դպրոցներին տալու է իւրաքանչիւր տարի հազար ռուբլի։

* * *

Այսօր, կիւրակէ, հոկտեմբերի 3-ին հայոց մշտական խումբը տալու է Արծրունու թատրոնում մի ներկայացումներ։ Խաղալու են կոմս Սօլօգուբի «Նկարիչներ» 1 արարծ., փոխագր. պ. Գ. Զմշկեանի, որի անցքը պատահում է Թի ֆլիսում, «Խեչօի թուղը», ֆարս վոդ. 1 արարծ. հեղ., պ. Է. Տէր-Գրիգորեանցի, որի անցքը պատահում է Երեւանում և «Ընտանեկան փոթորիկ» վոդէվիլ 1 արարծ., թարգմանութիւն ռուսերէնից։

Այդ ներկայացումը կը լինի այս սեզոնում մշտական խումբի 5-րդը։ Պէտք է խոստովանենք, որ նախընթաց չորս ներկայացումները լաւ էին, և տարակոյս չը կայ, որ այս ներկայացումն էլ լաւ կը լինի։ Այդ երեկոյեան Թիֆլիզի բեմի վերայ առաջին անգամ դուրս կը գայ տաճկաստանցի տիկին Ջաբէլը, որի մեղմ ձայնը և հայերէն արտասանութիւնը գովում են, և ասում են, որ երկրորդական դերերի համար շատ գոհացուցիչ է։

Թատրոնի նշանակութեան և կարեւորութեան վերայ խօսելը այժմս աւելորդ է, մնում է Թիֆլիսի հասարակութեանը յետ չը մնալ մինչև անգամ վրացիներից, որոնք ամեն կերպ պահպանում են իրենց ազգային թատրոնը։ Եթէ Թիֆլիսի ամբողջ հայ հասարակութիւնը մէկ փոքրիկ խումբ էլ չը կարողանայ պահպանել, այն ժամանակը Թող չը զարմանայ, երբ օտարները նրան ծաղրեն, ինչպէս էլ որ անուանեն արդէն։

* * *

Գոյնզգոյն ածականներ, ահա մեր հակառակ մամուլի միակ պատասխանը մեզ դէմ ուղղեցած բանակռու